

«Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

### 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ՝ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատուց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի.

3.1.8 Ձևնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

#### 3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այլ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինել՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

### **3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

### **3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## **4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 45,800,000 (քառասունհինգ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարման իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

## **5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## **6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

- ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.
- բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական քննության չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակցից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակապիշ և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուց հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք բերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:


9.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՁՈՒ ռազմարժեքական վարչությունը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**  
ՀՀ պաշտպանության նախարարություն  
ք. Երևան Բազրևանդի 5  
ՀՀ ՖՆ աշխատակազմի օրենսդրության  
վ/Հ 900011144129  
ՀՎՀՀ 00867415  
ՀՀ պաշտպանության նախարարություն  
ԼՏԱ դեպարտամենտի պետ



**ՎԱՃԱՌՈՂ**  
«ԿՈՆՑԵՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ  
Ք. Երևան, Արզումանյան 32-10  
«ԷՆ ԵՍ ՔԻ ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ  
Հ/Հ 217002182558007  
ՀՎՀՀ 01210095  
տնօրեն



ԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒՑԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ
1.	<p>Անգգայացման սարքավորում Leon plus Heinen Lowenstein</p>	<p>Միկրոպրոցեսորային կառավարմամբ, պնևմատիկ ինտագրիոն անգգայացման համակարգ, որը պետք է համարված լինի՝ արտաշնչման և ներշնչման HIWA տիպի հոսքի սենսորով, ավտոկավով ասերիլիզացվող: Էլեկտրոնային PEEP կարգաբերումով: Համագործի ինքնաատուզման տեսող 4 բուլբ: Լրտահուսքի սենսորով, գազի տիպի իրենտիֆիկացիայով, 3 դարակներով, անիվներով, անիվներով արգելանքով, ներկատուցված ասպիրատոր համակարգով:</p> <p><b>Տեխնիկական բնութագիրը՝</b>                      Ppeak, Mean, PEEP, Plateau, CPAP 4 - 100 cmH2O, քայլը 1 H2O, ± 4%                      MV չափման միջակայք 0 - 50լ, քայլը 10 մլ, ± 10%                      Vti, Vte չափման միջակայք 0 - 5000 ml, քայլը 1 մլ, ± 10%                      Շնչառության հաճախականությունը 0 - 150լ, քայլը 1/տոմ, ± 10%                      Գազերի վերլուծիչ ազդող նյութի ավտոմատ որոշմամբ - ճշգրտությունը CO2 ± 0,1%, ± 0,5%, N2O ± 2% - ± 3%, ազդող նյութի 300 ms - 350 ms;                      Չափման արագությունը CO2 250 ms, N2O 250 ms, ազդող նյութի 300 ms - 350 ms;                      CO2 արտաջրումը - mmHg, %, hPa, kPa.                      O2 քցիցք պարամագնետիկ տիպի, ճշգրտությունը - ± 1% - ± 4%, Չափման արագությունը - 600 ms:                      Գազերի խառնիչ - 0,2-18 լ/ր, հարաբերակցականության կարգաբերում                      Արտակարգ իրավիճակի չափաբաժին 4-15 լ/ր                      Օրոպելանտ խառնիչ&gt; 200 լ/ր                      O2 ֆլաշ կարգավորվող 35 լ/ր                      Թափման գազի ելքի ավելություն                      Ploop (cmH2O) միջակայքը մանուալ /ավտոմատ ռեժիմում ոչ պակաս քան 0 - 90;                      Ploop (cmH2O) միջակայքը մանուալ /ավտոմատ ռեժիմում ոչ պակաս քան 0 - 90;                      2 հատ RS232, UTP, VGA, USB - պորտերի առկայություն:                      Մերտիֆիկատորների առկայություն- 93 / 42 / EEC, DIN EN 60601-1, DIN EN 740, DIN EN 60601-1-2, DIN EN 740, IEC 60601-2-13, CE Mark, CAN / CSA ISO 13485 : 2003</p> <p><b>Ծավալով կարգաբերվող օդափոխություն՝</b>                      I:E 4:1 - 1:4;                      Շնչառության հաճախականությունը մեծահասակների - 4-40 շ/ր                      Շնչառության հաճախականությունը պատանիների - 14-80 շ/ր                      IBW ֆունկցիա ավտոմատ օդափոխության համար                      VT-ի միջակայքը մեծահասակների 300-1600մլ, պատանիների 20-600 մլ;                      P max (cmH2O) - 10-80                      PEEP (cmH2O) - 0-20                      Plateau % - 0-50</p> <p><b>Սիցրոն ծավալով կարգաբերվող օդափոխություն՝</b>                      Ներշնչման հաճախականությունը մեծահասակների - 4-40 շ/ր                      Ներշնչման հաճախականությունը պատանիների - 6-60 շ/ր                      Ներշնչման ժամանակը մեծահասակների 0,3-10                      Ներշնչման ժամանակը պատանիների 0,2-2,9                      I:E հաշվարկված միջակայքը մեծահասակների 32,3 : 1-1 : 49                      I:E հաշվարկված միջակայքը պատանիների 6,7 : 1-1 : 49                      VT-ի կարգաբերման միջակայքը մեծահասակների 300-1600                      VT-ի կարգաբերման միջակայքը պատանիների 20-600                      IBW ֆունկցիա ավտոմատ օդափոխության համար                      P max (cmH2O) - 5-80                      PEEP (cmH2O) - 0-20</p>

Plateau % - 0-50

Հուսիտորիզեր/ր-0,1-10

**Ճնշումով կարգաբերվող օդափոխություն՝**

P max (cmH<sub>2</sub>O) - 5-60

PEEP (cmH<sub>2</sub>O) - անջատված, 0-20

Plateau % - 10-90

Ճնշառության հաճախականությունը մեծահասակների - 4-40 շ/ր

Ճնշառության հաճախականությունը պատանիների - 14-80 շ/ր

IBW ֆունկցիա ավտոմատ օդափոխության համար

I:E 4:1 - 1:4;

**VTG ճնշումով կարգաբերվող օդափոխության ժամանակ՝**

Մեծահասակների միջակայք 300-1600

Պատանիների միջակայք 20-600

P max 10-80

IBW ֆունկցիա ավտոմատ օդափոխության համար

**Սիզրոն ճնշումով կարգաբերվող օդափոխություն՝**

P max (cmH<sub>2</sub>O) - 5-60

PEEP (cmH<sub>2</sub>O) - անջատված, 1-20

Plateau % - 10-90

Ճնշառության հաճախականությունը մեծահասակների - 4-40 շ/ր

Ճնշառության հաճախականությունը պատանիների - 14-80 շ/ր

I:E հաշվարկված միջակայքը մեծահասակների 32,3 : 1:1 : 49

I:E հաշվարկված միջակայքը պատանիների 6,7 : 1:1 : 49

Հոսքի տրիգեր /ր-0,1-10

**PSV օդափոխություն՝**

P<sub>insp</sub> (cmH<sub>2</sub>O)- 5-60

PEEP (cmH<sub>2</sub>O) - անջատված, 1-20

Ապնոնի ժամանակը 4, 6, 8, 10, 15, 30, 45 վրկ

Հոսքի տրիգեր/ր-0,1-10

Մանուալ շնչառության ռեժիմ

**VTG-ն PSV օդափոխության ժամանակ՝**

Կարգաբերումը IBW-ից

Միջակայքը մեծահասակների 300-1600

Միջակայքը պատանիների 20-600

**Դիտարկման հնարավորությունները՝** տայմերի ակալություն բոլոր ռեժիմներում, էլյունետո, O<sub>2</sub> էֆեկտիվությունը, ներկատուցված 15 դրոյանոց սենտրալին մոնիտոր: Հետևյալ կորերի արտացոլման հնարավորության ակալությունճնշում, հոսք, ծավալ, CO<sub>2</sub>, N<sub>2</sub>O, Հարտան, հտՖիլտրան, էնֆիլտրան, սելֆիլտրան, դեսֆիլտրան, թթվածին, հոսք/ճնշում, ծավալ/ճնշում, ծավալ/ճնշում, հոսք/ծավալ, կորերիստաբեցում:

72 ժամ գրաֆիկական և թվային տրենդերի աակալություն - Ppeak, Pmean, Pexp, MV, CO<sub>2</sub> insp. / exp., O<sub>2</sub> insp. / exp., ազդող նյութի MAC, դինարություն, ստատիկ/դինամիկ համապատասխանություն: Մինչև 3000 տազնեակների պահպանում: Մինչև 3000 իրադարձությունների պահպանում և արտաբերում ամիս, անաթիվ և ժամ ֆորմատով - համակարգի տեսափորձան տվյալները, տագնապները, օդափոխության սկիզբ/ավարտ, պարամետրերը, պարամետրերի փոփոխությունները: Սարքը պետք է հնարավորություն ունենա հետևյալ ցուցանիշների՝ թոքերի դիմադրություն, ստատիկ/դինամիկ համապատասխանություն, CO<sub>2</sub>/C, Pplateau, Pmean, PEEP, MV, MVcalculated, MVspontaneous%, VTi, Vte, Leak%, Frequency total, spontaneous, FrequencyCO<sub>2</sub>, Tispiratoric, Texpiratoric, I : E, CO<sub>2</sub>, O<sub>2</sub>, N<sub>2</sub>O, Agent, MAC:

**Խնամայալի մոնիտորը**

Էլյունին էՍԳ-ի 3,5 և 12 արտածումների ցուցարդման հնարավորություն

Զգայունությունը՝ 1,25մմ/սՎ ( $\times 0,125$ ), 2,5մմ/սՎ ( $\times 0,25$ ), 5մմ/սՎ ( $\times 0,5$ ), 10մմ/սՎ ( $\times 1$ ), 20մմ/սՎ ( $\times 2$ ), 40մմ/սՎ ( $\times 4$ ), AUTOgain

ԷՍԳ արտածման արագությունը՝ 6,25մմ/վ, 12,5մմ/վ, 25մմ/վ, 50մմ/վ

Պլյանկեր "զգալու" հնարավորություն

ԷՍԳ-ի վերականգնվելու ժամանակը դեֆիբրիլացիայից հետո՝ <5վ

Արտի կծկման հաճախականության հաշվարկում

<p>Սրտի կծկման հաճախականությունը հաշվարկված սահմանները՝ չափահասների համար 15 ԵՊՄ մինչև 300 ԵՊՄ, նորածնային և մանկավայրի համար 15 ԵՊՄ մինչև 350 ԵՊՄ</p> <p>Արյան ճնշման ոչ ինվազիվ(NIBP) չափման օսցիլոմետրիկ մեթոդ</p> <p>Արյան ճնշման ոչ ինվազիվ չափման 3 ռեժիմ՝ մանուալ, ավտոմատ, շարունակական</p> <p>Ավտոմատ ռեժիմում արյան ճնշման ոչ ինվազիվ չափման դարարները՝ 1/2/3/4/5/10/15/30/60/90/120/240/480 րոպե</p> <p>Շարունակական ռեժիմում արյան ճնշման ոչ ինվազիվ չափման տևողությունը՝ 5 րոպե դադարները 5 վարկյան</p> <p>Թթվածնի հագեցվածության (SpO2, Nellcorտիպի) չափման հնարավորություն</p> <p>Թթվածնի հագեցվածության (SpO2, Nellcorտիպի) չափման սահմանները՝ 0 % մինչև 100 %</p> <p>Թթվածնի հագեցվածության (SpO2, Nellcorտիպի) չափման տվյալների թարմացումը՝ 1 վարկյանում</p> <p>Մարմնի ջերմաստիճանի չափման հնարավորություն</p> <p>Մարմնի ջերմաստիճանի չափման մեթոդ՝ անմիջական</p> <p>Մարմնի ջերմաստիճանի չափման ձևը՝ մաշկային, ուրիշ աղիքային և բերանի խոռոչում</p> <p>Մարմնի ջերմաստիճանի չափման սահմանը՝ 0 °C մինչև 50 °C (32 °F մինչև 122 °F)</p> <p>Մարտկոցով աշխատանքի հնարավորություն՝ 80 րոպե (2.2Աժ մարտոց)</p> <p>Լիցքավորման ժամանակը՝ 150 րոպե (2.2Աժ մարտոց)</p> <p>Պաշտպանվածության դաս՝ IPX1</p> <p>Անվտանգության նորմեր՝ IEC 60601-1: 1988+A1: 1991+A2: 1995; EN 60601-1: 1988+A1: 1993+A2: 1995; IEC 60601-1-2: 2001+A1: 2004; EN 60601-1-2: 2001+A1: 2006; IEC/EN 60601-1-8, IEC/EN 60601-2-25, IEC/EN 60601-2-27, IEC/EN 60601-2-30, IEC/EN 60601-2-34, IEC/EN 60601-2-49, ISO 9919, EN 12470-4, EN 1060-1+A1, EN 1060-3+A1, EN 1060-4, ISO 21647, ANSI/AAMI SPIO, ANSI/AAMI EC13, ANSI/AAMI EC53, ANSI/AAMI EC57</p> <p><b>Համալրումը՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ինհալացիոն անօգայացման սարք</li> <li>• Ինսամյալի մոնիտոր</li> <li>• Գոլորշացուցիչ – 2 հատ /ողից մեկը խորհրդարանի համար, մյուսը՝ սևֆլուորանիլ/</li> <li>• Երաշխիք մեկ տարի</li> <li>• Ներկատուցված մարկոցներ նախատեսված ոչ պակաս քան 100 րոպե աշխատանքի համար</li> <li>• Տերադիոմ և ուսուցում տեղում</li> <li>• Օգտագործողի ձեռնարկ</li> <li>• Օգտագործողի DVD սկավառակ</li> </ul>	<p>Ջրի դեմնիզացման կոմպակտ համակարգ, նախատեսված՝ անալիտիկ և քիմիաբանական վերլուծիչներին, ավտոկլավներին և այլ սարքերին միանալու, ինչպես նաև այլ հիվանդանոցային կարիքների համար: Սարքը պետք է ինչպես ստանդարտ տեղակայվի ինչպես ստանդարտ լաբորատոր սերվերին, այնպես էլ սերվերի տակ ծախսվող նյութերին ինչպես հասանելիության հնարավորությամբ: Ջրի համակարգը կազմված է մեկ անբաժան գտնան միավորից և իր մեջ ներառի 50 լ տարողությամբ ներկատուցված ռեզերվուար, CO2 գտիչ, RO մեմբրան, էլեկտրոլիտիկաատար (EDI), դիֆուզիոն զտիչ, ՌՆՍ լավակ, ուլտրամիկրոգտիչ և հավելյալ թեթազերիմուդ:CO2 արտանետման նվազեցման համար: Մեկ համակարգում միավորելով բազմաթիվ տեխնոլոգիաներ, հնարավորություն է ընձեռում օգտագործողին ստանալ հաստատուն, բարձրորակ 1-ին կարգի ջուր: Ջրի գտնան համակարգը հնարավորություն ունի անմիջապես խմելու ջրից մատակարարել գտված ջուր, ինչը բացառում է մեծ կենտրոնական բյուրի և ամբողջ շենքի խողովակների միջով հոսող ջրի գտնան անիրազեկությունը: Չօգտագործման ժամանակահատվածում ջրի օպտիմալ մաքրության պահպանման և վատթարացման կանխարգելման նպատակով ջրի մաքրման համակարգը շրջապատելու է ջուրը ներքին ռեզերվուարի և ինտեգրված մաքրման գտիչների միջև, ներկատուցված պոմպի միջոցով:Օգտագործման ժամանակ ջրի օպտիմալ մաքրության պահպանման և վատթարացման կանխարգելման օգտագործում է բաշխիչ կոնստրուկցիոն: Համակարգը պետք է հնարավորություն ունենա կանխարգելել բորակի պարամետրերի չարտանագրված օգտագործումը՝ ապահովելով համակարգի կայուն արտադրողականությունը և աշխատանքը:Բակտերիաների ոչնչացման և որակյալ ջրի ստացման համար նախատեսված ներկատուցված 25-ձև ավիթի երկարությամբ ուլտրամառնոչկազույն լավակ: Լամպի համակարգի կատուցվածքը հնարավորություն է տալիս նորմալ պայմաններում առավելագույն 12 ամիս առանց փոխարինման աշխատելու: Համակարգը ծրագրի ինքնաբերական շնորհիվ երաշխավորում է գտված ջրի արտադրանքը զրկա ցանկացած ժամին և օժտված է արտակարգ լրամիջակներում ջրի գտիչների շրջանցման հնարավորությամբ:</p> <p><b>Ընդհանուր դրույթներ՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Արտադրվող դեմնիզացված ջրի քանակը՝ 60 լ / 1 օ:</li> <li>• Համակարգին անիվներ կցելու հնարավորություն</li> <li>• Pulse մոդուլի առկայություն</li> <li>• Ջրի օպտիմալ մաքրության և մաքրման համակարգի պահպանման համար սանիտարական վերամշակման ավտոմատացված ծրագրի միջոցով ախտահանման հնարավորություն:</li> <li>• Բանալիների միջոցով՝ օգտագործողներին հասանելիության տարբեր մակարդակների ընձեռման հնարավորություն:</li> </ul>
--	--

**Ջրի դեմնիզատոր**  
**Medica R-60 EDI ELGA**

	<ul style="list-style-type: none"> <li>• Զգույթագործման ժամանակահատվածում ջրի օպտիմալ մաքրության պահպանման և վատթարացման կանխարգելման նպատակով ջրի մաքրման համակարգը պետք է հնարավորություն ունենա ավտոմատ որդրման:</li> <li>• Ծախսանյութերի ժամանակին փոխարինման համար նախատեսված ավտոմատ նախագրվույցում:</li> <li>• Զրի գտման համակարգը պետք է հնարավորություն ունենա արդիականացման, որպեսզի ապահովի 120յժ հոսք:</li> <li>• ղիմադրողականության չափիչը պետք է հնարավորություն ունենա դիմադրության առանց ջերմաստիճանային փոփոխությունների:</li> <li>• Զրի մաքրման համակարգը պետք է ունենա փարժեք արուդի միգուալ ազդանշաններ:</li> <li>• Զրի գտման համակարգը պետք է ունենա ջրի մաքրության և համակարգի արտադրողականության պարամետրերի տրամադրելու հնարավորություն:</li> <li>• Զրի գտման համակարգը պետք է ունենա տվյալների հավաքագրման հնարավորություն RS-232 ինտերֆեյսի օգնությամբ:</li> <li>• Բոլոր տվյալները պետք է արտացոլվեն էկրանին՝ հնարավորություն տալով օգտագործողին անմիջականորեն տեղեկություն ստանալ բոլոր կարևորագույն պարամետրերից:</li> <li>• Անխափան աշխատանքը ապահովելու նպատակով ինարավոր է ջրի գտման համակարգերը միավորել գուգահեռ՝ որը հնարավորություն է ստեղծում ապահովել համապատասխան բանավորմանը ջրի հիվանդանոցային կարիքների համար, ինչի շնորհիվ էլ ջրի գտման սարքերը աշխատում են հզորության կեսի չափով: Սարքերից մեկի խափանման կամ սպառարկման ժամանակ մյուս սարքը պետք է ապահովի անհրաժեշտ բնակաճությունը:</li> <li>• Լաբորատորիայի աննվազն պահովությունը երաշխավորելու, ինչպես նաև ջրի գտման համակարգի համապատասխանելիությունը ըստ միջազգային ընդունված ապահովության ստանդարտներին՝ ջրի գտման համակարգը պետք է ներառված լինի UL և ULCS ցուցանում և ունենա CE Mark</li> </ul>
--	--

**Ծանոթություն՝ Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Արտյան, ՀՀ ՊՆ 73014 գյուղամաս հասցեով:**

1. Մատակարարման ժամանակ մատակցող պետք է ներկայացնի արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճենը և մատակարարված ապրանքատեսակների խմբագրանակի կ/կամ/ ապրանքի որակի սերտիֆիկատ (Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր):

**ԳՆՈՐԴ**


ՀՀ պաշտպանության նախարարություն  
 ՀՀ պաշտպանության նախարարության  
 ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

**ՎԱՃԱՆՈՂ**

«ԿՈՆՏԵՆ-ԷՆԵՐՋԻՆԵՐ» ՓԲԸ

Կոնտեն-Էներջինեյր

AP0294263



Բ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ՎՄԱՆԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավ. գին/դրամ/	Ընդհանուր գումար/դրամ/	Գնման ժամանակացույց	
						2017թ. II եռամսյակ	2017թ. II եռամսյակ
1.	Անզգայացման սարքավորում	հավաքածու	2	14,500,000	29,000,000	2	2
2.	Զրի ղեկունիզատոր	հավաքածու	2	8,400,000	16,800,000	2	2
	<b>Ընդամենը</b>				<b>45,800,000</b>		

ՎՃԱՐՄԱՆ ՎՄԱՆԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

Հ/հ	Ապրանքի անվանումը	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., այդ թվում՝					
			Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.17թ
1	Անզգայացման սարքավորում	33171700/1/4/4	29,000,000	29,000,000	29,000,000	29,000,000	29,000,000	29,000,000
2	Զրի ղեկունիզատոր (ջուրը փափկեցնող սարք)	39132230/1/4/4	16,800,000	16,800,000	16,800,000	16,800,000	16,800,000	16,800,000

\* Վճարման ներառյալ գումարները ներկայացված են անողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ պաշտպանության նախարարության  
ՆՏԱ ղեկավարտամենտի պետի ՊԺԿ




ՎՃԱՐՈՐ

«ԿՈՆՑԵՐՆ-ԷՆԵՐԳՈՒՄԱՆ» ՓԲԸ  
Նոյեմբեր

*Handwritten signature*

ԱԿ 029 62 63



Պայմանագրի կողմ  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՄՆԱՆ**

«        » «        » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «        » «        » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն՝ ի դեմս \_\_\_\_\_ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս \_\_\_\_\_, հիմք ընդունելով

Պայմանագրի կատարման վերաբերյալ «        » «        » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

**Մատակարարված ապրանքների**

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ապրանքը հանձնեց**

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

**Ապրանքը ընդունեց**

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

**ԱԿՏ N**

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Գնորդ) և  
(Գնորդի անունը)  
\_\_\_\_\_ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
(Վաճառողի անունը)  
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն